ՔԱՂՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

USAID ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

csodepo ՀԿ զարգացման ծրագիր

ԵՎՐԱՍԻԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Այլընտրանքային Նախագծեր Խումբ

Նախագծի մասին

Օրենսդրական առաջարկներ ներկայացնել, մասնակցել խորհրդարանում մշակվող օրենքների նախագծերին, կազմել լիարժեք օրենսդրական նախագծեր և հետևել, որպեսզի դրանք հասնեն խորհրդարան և մտնեն ԱԺ օրակարգ. այս ամենը թվում է բարդ և հասանելի միայն խորհրդարանականներին ու կառավարությունը։

Ամենևին։ Մենք նախաձեռնել ենք **«Օրենսդրական այլընտրանք»** ծրագիրը, որպեսզի քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և անհատներին ներկայացնենք այն բոլոր՝ օրենքով սահմանված ձևերը, որով նրանք կարող են մասնակցել օրինաստեղծ աշխատանքին, աջակցել իրենց հետաքրքրող ոլորտների կատարելագործմանը, օգնել՝ ավելի լավը դարձնել օրենքները, որոնք գործում են բոլորիս համար։

Մեր կայքի (www.altprojects.am) «Օրենսդրական այլընտրանք» բաժնում կարող եք գտնել ծրագրի իրականացման ընթացքում պատրաստված ուսումնական, ճանաչողական նյութերը, հոլովակները, այլ տեղեկատվություն։

Կայքի մեկ այլ բաժնում՝ «Առաջարկների բանկ» հավելվածում, կարող եք ինքներդ գտնել այն հանձնաժողովը, որի ենթակայության տակ գտնվում է այս կամ այն՝ ձեզ հետաքրքրող ոլորտը, և ներկայացնել սեփական ծրագրային առաջարկը։

Ծրագրի ղեկավար՝ Էլինար Վարդանյան

«Այլընտրանքային նախագծեր խումբը» հասարակական կառույց է, որի անդամները մշակում և ներկայացնում են հանրային կյանքի առավել ցավոտ ու կարևոր խնդիրների շուրջ սեփական, այլընտրանքային լուծումները։

Սույն ծրագրի իրականացումը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով, «ՀԿ Դեպո - Հասարակական կազմակերպությունների զարգացման ծրագրի» շրջանակում։ Ծրագրի շրջանակներում ստեղծված նյութերի բովանդակությունը կամ արտահայտված տեսակետները միմիայն Այլընտրանքային նախագծեր խումբ հասարակական կազմակերպության և Եվրասիա համագործակցություն հիմնադրամինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Քաղհասարակության
կազմակերպությունների
մասնակցությունը օրենսդրական
նախաձեռնություններին

ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՆ ՔՀԿ-ՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Որո՞նք են այն գործիքները, որոնցից կարող է օգտվել հասարակական կազմակերպությունը՝ որևէ օրենսդրական նախաձեռնության մասնակցելիս

1. Հանրային քննարկումներ

Օրենսդրական ակտերի նախագծերը ենթակա են հանրային քննարկման: Այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերը հանրային քննարկման կարող են դրվել նախագիծը մշակող կամ այն ընդունող մարմնի նախաձեռնությամբ:

Հանրային քննարկումը կազմակերպում է նախագիծը մշակող մարմինը: Հանրային քննարկումների տևողությունն առնվազն 15 օր է:

Հանրային քննարկումներն անցկացվում են նորմատիվ իրավական ակտի նախագիծը և դրանց ընդունման հիմնավորումը շահագրգիռ մարմիններին ներկայացնելու հետ միաժամանակ հրապարակելու միջոցով:

Հանրային քննարկումների անցկացման արդյունքները և դրա հիման վրա լրամշակված նորմատիվ իրավական ակտի նախագիծը նույնպես հրապարակվում են: Հանրային քննարկման ենթակա՝ հանրային քննարկում չանցած Կառավարություն ներկայացված նախագիծը Կառավարության կողմից կարող է վերադարձվել այն ներկայացնող մարմնին[1]:

---

1 Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 2-րդ գլուխ

1.1 Ինչ նպատակով են հասարակությունը, քաղհասարակության կազմակերպությունները մասնակցում իրավաստեղծ գործընթացին

Ընդհանրապես հանրային քննարկումները ժողովրդավարական և թափանցիկ իրավաստեղծ գործընթացի պահանջն են: Կան նաև հստակ նպատակներ, որոնց իրականացման համար կարևոր է իրավաստեղծ գործընթացին հասարակության մասնակցության ապահովումը.

- խթանել իրավաստեղծ գործընթացում պետության և հասարակության միջև կառուցողական երկխոսությունը,
- լսել համապատասխան ոլորտում գիտելիքներ և փորձ ունեցող շահագրգիռ կողմերի կարծիքներն ու առաջարկությունները,
- իրավական ակտի նախագծի մշակման ժամանակ հաշվի առնել դրա հասցեատերերի (շահառուների) դիրքորոշումները. Այսպիսով հնարավոր կլինի ապահովել իրական կյանքում կիրառելի, «խելքին մոտ», իրական թիրախներ ունեցող և օբյեկտիվ կարիքներ բավարարող իրավական ակտի գոյությունը,
- դեռևս իրավական ակտի նախագծման փուլում բացահայտել և լուծում տալ հասարակական այն մտահոգություններին, որոնք հետագայում կարող են խոչընդոտել իրավական ակտի գործնական կիրառմանը:
- հասարակությանն իրազեկել մշակվող իրավական ակտի նախագծերի վերաբերյալ, պարզաբանել առաջարկվող կարգավորումների բնույթը.

1.2 Ինչպե՞ս են կազմակերպվում հանրային քննարկումները

Հանրային քննարկումներ կարող են անցկացվել իրավաստեղծ գործընթացի ամենատարբեր փուլերում, օրինակ՝ երբ.

- դեռևս առկա է միայն գաղափար՝ իրավական ակտի նախագծի մշակման վերաբերյալ ***(նախնական հանրային քննարկումներ),***
- իրավական ակտը մշակման փուլում է ***(միջանկյալ հանրային քննարկումներ),***
- առկա է իրավական ակտի մշակված նախագիծ ***(ամփոփիչ հանրային քննարկումներ):***

1.3 Ո՞ր մարմինն է կազմակերպում հանրային քննարկումները

Քննարկումը, որպես կանոն, նախաձեռնում է նախագիծը մշակող մարմինն իր հայեցողությամբ՝ գործնական անհրաժեշտությունից ելնելով: Այնուամենայնիվ, հանրային քննարկում կարող են նախաձեռնել նաև ՔՀԿ-ները՝ ելնելով իրենց շահառուներին տվյալ նախագծի առնչությունից:

Նորմատիվ իրավական ակտի նախագծի հանրային քննարկումներին **մասնակցության բաց հրավերը պարտադիր կերպով պետք է տեղադրվի** նախագիծը մշակող մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում:

Բացի այդ, նախագիծը մշակող մարմինը կարող է հրավերը հրապարակել նաև **հեռահաղորդակցության այլ միջոցներով**, օրինակ՝ հեռուստատեսությամբ, ռադիոյով և այլն:

Հրավերի հետ միասին նախագիծ մշակող մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվում է.

- հանրային քննարկման դրվող նորմատիվ իրավական ակտի **նախագիծը**,
- նորմատիվ իրավական ակտի **ընդունման հիմնավորումը**, եթե հանրային քննարկումը ծավալվում է իրավական ակտի պատրաստի նախագծի շուրջ,
- նախագիծ մշակող մարմնի հայեցողությամբ այլ նյութեր:

1.4 Ովքե՞ր են մասնակցում հանրային քննարկումներին

Հանրային քննարկումների մասնակիցների շրջանակի սահմանափակում օրենքով նախատեսված չէ, և դրանց կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձինք («Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով):

Թե որքանով արդյունավետ կլինեն բաց հանրային քննարկումները, մեծապես պայմանավորված է երկրում քաղաքացիական հասարակության կայացվածության և իրավագիտակցության աստիճանով: Բաց հանրային քննարկումներին հատուկ է.

- առավելապես ոչ մասնագիտական ուղղվածությունը,
- արտահայտվող բազմաբնույթ կարծիքները, որոնք խորհրդատվական տեսանկյունից կարող են աչքի չընկնել մասնագիտական բարձր որակով:

Այդուհանդերձ, բաց հանրային քննարկումները ժողովրդավարության կարևոր դրսևորում են, և, երբեմն, դրանց համեմատաբար ցածր **որակը չի կարող նվազեցնել** դրանց անցկացման անհրաժեշտությունը:

Բաց հանրային քննարկումների առավելությունը և արժևորումը պայմանավորված է նաև նրանով, որ դրանց մասնակիցների շրջանակը չի որոշվում համապատասխան նախագիծը մշակող մարմնի հայեցողությամբ, և, հետևաբար, բացառվում է նաև հնարավոր կողմնակալությունը՝ հանրային քննարկումների մասնակիցների շրջանակի ընտրության հարցում:

1.5 Կարո՞ղ են արդյոք անցկացվել ավելի նեղ շրջանակների հետ քննարկումներ

Ի լրումն բոլոր շահագրգիռ անձանց հետ անցկացվող հանրային քննարկումների՝ նախագիծը մշակող մարմինը կարող է նպատակահարմար համարել նաև սահմանափակ, նախապես ընտրված շրջանակի անձանց հետ հանրային քննարկումների անցկացումը:

Նման քննարկումները, որպես կանոն, անցկացվեն համապատասխան բնագավառի փորձագետների, ինչպես նաև այն կողմերի ներգրավմամբ, որոնք նախագծի պոտենցիալ հասցեատերերն են և որոնց շահերը կարող են շոշափվել նախագծով:

Այդուհանդերձ, քանի որ մասնակիցների կանխորոշված շրջանակի հետ հանրային քննարկումների ժամանակ պետական մարմինն է որոշում մասնակիցների շրջանակը, քննարկումների այս տեսակը **չի կարող լինել** հանրային քննարկումների անցկացման **միակ տարբերակը** և գործում է միայն **ի լրումն** բաց հանրային քննարկումների:

ՕՐԻՆԱԿ՝

Եթե Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը մշակում է «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի նախագիծ, ապա պոտենցիալ շահագրգիռ անձինք են նախ և առաջ՝

1. Հայ առաքելական եկեղեցին,
2. Հայաստանի Հանրապետությունում գործող ինչպես գրանցված կրոնական կազմակերպությունները, այնպես էլ չգրանցված կրոնական խմբերը,
3. ազգային փոքրամասնությունները, որոնք ունեն իրենց ուրույն կրոնական դավանանքը,
4. մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններ:

Այսօր հանրային լսումների տարբերակներից մեկը e-drafts.am ինտերնետային կայքում կազմակերպվող քննարկումն է: Ֆիզիկական և իրավաբանական անձինք ինտերնետային կայքում հրապարակված նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտողությունները՝ դրանք

- թողնելով ինտերնետային կայքում հատուկ այդ նպատակով ստեղծված տեղում,
- ուղարկելով համապատասխան էլեկտրոնային հասցեով կամ

- գրավոր ներկայացնելով նախագիծ մշակող մարմնին:

Էլեկտրոնային հասցեով առաջարկություններ և դիտողություններ ստանալու դեպքում նախագիծ մշակող մարմինը ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում հետադարձ կապի միջոցով պետք է տեղեկացնի դրանք ուղարկող անձանց՝ համապատասխան դիտողությունները և առաջարկությունները ստացած լինելու մասին:

1.6 Ինչպե՞ս են ամփոփվում հանրային քննարկումների արդյունքները

Հանրային քննարկումների ընթացքում ստացված առաջարկությունների, դիտողությունների վերլուծության և ամփոփման արդյունքներով՝ նախագիծ մշակող մարմինը նախագծում կարող է կատարել անհրաժեշտ լրամշակումներ:

Հանրային քննարկումների ավարտից հետո տասնհինգօրյա ժամկետում նախագիծը մշակող մարմինն իր պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրում է՝

- լրամշակված նախագիծը,
- ամփոփաթերթը:

ՔՀԿ-ների մասնակցությունն իրավաստեղծ գործընթացին ապահովելու համար գործում է նաև **խորհրդարանական լսումների** ինստիտուտը:

Խորհրդարանական լսումներ կարող են հրավիրել՝

- Ազգային ժողովի նախագահը.
- մշտական հանձնաժողովները, առանձին օրենքի նախագծի

հարցով ժամանակավոր հանձնաժողովները՝ իրենց վերապահված ոլորտներին վերաբերող հարցերով.

- խմբակցությունը՝ իր կամ խմբակցության կազմում ընդգրկված պատգամավորի առաջադրած նախագծին վերաբերող հարցով: Խմբակցությունը յուրաքանչյուր հերթական նստաշրջանի ընթացքում կարող է հրավիրել 1 **լսում**:

Լսումների վերաբերյալ տեղեկատվությունը դրանց անցկացման օրվանից **առնվազն 3 աշխատանքային օր առաջ** տրամադրվում է զանգվածային լրատվության միջոցներին:

Լսումներ հրավիրող հանձնաժողովը կամ խմբակցությունը կարող է նախապատրաստել իր հրավիրած լսումների թեմայի վերաբերյալ ներկայացված գրավոր ելույթներ, առաջարկներ, եզրակացություններ, տեղեկանքներ, ինչպես նաև՝ լսումների արդյունքներն ամփոփող այլ նյութեր, որոնք կարող են հրապարակվել հանձնաժողովի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի նախագահի համաձայնությամբ:

2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ ԱՌԱՋԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

2.1 Ովքե՞ր կարող են Ազգային Ժողովին քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկել

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ ընտրական իրավունք ունեցող առնվազն 50 000 քաղաքացի ունի Ազգային ժողովին քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք (նախագիծը պետք է ներկայացվի միասնաբար՝ առնվազն հիսուն հազար քաղաքացու ստորագրությամբ):

2.2 Ո՞ր նախագծերը չեն կարող ներկայացվել քաղաքացիական նախաձեռնության կարգով

Քաղաքացիական նախաձեռնության կարգով չեն կարող ներկայացվել մի շարք նախագծեր: Այդ նախագծերի շրջանակը հետևյալն է.

- պետական բյուջե[2],
- միջազգային պայմանագրերի վավերացնման, կասեցնման և չեղյալ հայտարարելու առաջարկություն[3],
- համաներման մասին օրենքի նախագիծ[4],
- երկրի վարչատարածքային բաժանում[5],
- նախարարությունների ցանկը և Կառավարության գործունեության կարգը[6],

---

2 Սահմանադրության 110-րդ հոդվածի 1-ին մաս

3 Սահմանադրության 116-րդ հոդվածի 2-րդ մաս

4 Սահմանադրության 117-րդ հոդված

5 Սահմանադրության 121-րդ հոդված

6 Սահմանադրության 147-րդ հոդվածի 2-րդ մաս

- հանրային շահից ելնելով՝ միջհամայնքային միավորումների ստեղծում[7]:

Տվյալ հոդվածներով նախագծերը վերապահված են **Կառավարության** բացառիկ իրավասությանը:

2.3 Ի՞նչ ընթացակարգով կարող են քաղաքացիները նախաձեռնել օրենքի նախագծի ընդունում և/կամ հանրաքվեի անցկացում

Քաղաքացիական նախաձեռնության կարգով Ազգային ժողովին օրենքի նախագիծ առաջարկելու համար կազմավորվում է **առնվազն 50 քաղաքացուց բաղկացած** նախաձեռնող խումբ:

Նախաձեռնող խումբը գրանցման համար Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում.

- նախաձեռնող խմբի բոլոր անդամների կողմից ստորագրված որոշում՝ նախաձեռնող խումբ կազմավորելու և նախաձեռնող խմբի **լիազոր ներկայացուցիչ** նշանակելու վերաբերյալ, որում առկա ստորագրությունները վավերացվում են նոտարական կարգով,
- նախաձեռնող խմբի անդամների անձը հաստատող փաստաթղթի պատճենները,
- համապատասխան օրենքի նախագիծը՝ էլեկտրոնային և թղթային տարբերակով,
- նախաձեռնող խմբի էլեկտրոնային փոստի հասցեն, որը նախաձեռնող խմբի գրանցումից հետո հրապարակվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում:

7 Սահմանադրության 189-րդ հոդվածի 1-ին մաս

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 3 **աշխատանքային օրվա** ընթացքում գրանցում է նախաձեռնող խմբին և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչին կամ մերժում է գրանցումը, եթե վերը նշված պահանջները պահպանված չեն:

Գրանցումից հետո նախաձեռնող խումբն իրավունք է ստանում՝ ձեռնարկել օրենքի նախագծի ընդունման նախաձեռնությանը քաղաքացիների միացումը՝ ստորագրությունների հավաքագրման միջոցով:

2.4 Ինչպե՞ս է իրականացվում ստորագրությունների հավաքագրումը

Ստորագրությունների հավաքագրմանը (նախաձեռնել, կազմակերպել, օժանդակել) կարող են ներգրավվել 16 տարին լրացած քաղաքացիները:

Ստորագրել կարող են միայն ստորագրելու պահին **հանրաքվեին մասնակցելու իրավունք** ունեցող քաղաքացիները:

Ստորագրությունների հավաքագրումն իրականացվում է ստորագրությունների հավաքագրման ձևաթերթիկների միջոցով՝ տեղում ստորագրելու կամ էլեկտրոնային եղանակով, եթե Կենտրոնական ընտրական հանձնաժողովը չի սահմանել ստորագրությունների հավաքագրումը միայն էլեկտրոնային եղանակով իրականացնելու կարգ:

Տեղում ստորագրելու դեպքում ձևաթերթիկում լրացվում են ստորագրողի անձնագրային տվյալները, ձևաթերթիկը ստորագրում և հանձնվում է ստորագրությունների հավաքագրումն իրականացնող անձին, իսկ էլեկտրոնային եղանակի դեպքում՝

ձևաթերթիկը ստորագրվում է էլեկտրոնային նույնականացման եղանակով:

Տեղում ստորագրությունների հավաքագրման համար օգտագործվող ձևաթերթիկներ նախաձեռնող խմբի անդամներին չեն տրամադրվում՝ դրանք ներբեռնվում և տպագրվում են հավաքագրողների խմբի կողմից:

Տեղում ստորագրությունների հավաքագրում կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող՝

- համայնքապետարաններում,
- բազմաբնակավայր համայնքներում՝ նաև համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ղեկավարների նստավայրերում,
- Երևան քաղաքում՝ վարչական շրջանների ղեկավարների նստավայրերում,
- մարզպետարաններում:

Տեղում ստորագրությունների հավաքագրումն իրականացվում է նախաձեռնող խմբի ներկայացուցչի կողմից՝ համապատասխան **հանրային ծառայողի** պարտադիր մասնակցությամբ, ինչպես նաև նոտարական գրասենյակներում՝ նոտարների կողմից: Տեղում ստորագրությունների հավաքագրման վայրը տրամադրվում է մարմինների ղեկավարների կողմից՝ նախաձեռնող խմբի՝ գրավոր դիմելուց հետո 3 օրվա ընթացքում:

Տեղում ստորագրությունների հավաքագրմանը կարելի է միանալ նոտարական կարգով տրված հայտարարությամբ, որի ձևը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Տեղում ստորագրությունների հավաքագրմանը կարելի է միա-

նալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հայտնած հասցեով՝ էլեկտրոնային ստորագրության միջոցով:

Ստորագրությունների հավաքագրումն իրականացվում է նախաձեռնող խմբի գրանցումից հետո՝ 45 օրվա ընթացքում, իսկ հանրաքվեի միջոցով ընդունելու համար՝ 60 օրվա ընթացքում:

Ստորագրությունների հավաքագրման ձևաթերթիկների ձևերը և լրացման կարգը սահմանում է **Կենտրոնական ընտրական հանձնաժողովը**: Ստորագրությունների հավաքագրման ձեւաթերթիկների նմուշները ներբեռնման հնարավորությամբ տեղադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչի դիմումը և ստորագրված ձևաթերթիկները ստանալուց հետո մեկամսյա ժամկետում իրականացնում է **ստորագրությունների վավերականության հաստատում:**

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ստուգման արդյունքում որոշում է կայացնում ստորագրությունների վավերականությունը հաստատելու մասին, եթե առկա են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ պահանջվող քանակի վավեր ստորագրություններ, իսկ հակառակ դեպքում մերժում է հաստատումը: Հավաքագրված ստորագրությունը համարվում է վավեր, եթե ձևաթերթիկում պահանջվող տվյալները ամբողջական են և լրացված են պատշաճ ձևով: Եթե ձևաթերթիկում պահանջվող տվյալները ամբողջական չեն կամ լրացված են ոչ պատշաճ ձեւով, ստորագրությունը հանվում է ներկայացված ստորագրությունների խմբաքանակից: Եթե քաղաքացու տվյալները կրկնվում են, ապա հաշվվում է տվյալ քաղաքացու միայն

մեկ ստորագրությունը:

Քաղաքացիական նախաձեռնության լիազոր ներկայացուցիչը ստորագրությունների վավերականությունը հաստատելու վերաբերյալ որոշումը ստանալուց հետո 15-օրյա ժամկետում համապատասխան նախագիծը ներկայացնում է Ազգային ժողով:

Ստորագրությունների վավերականության հաստատումը մերժելու մասին որոշումը քաղաքացիական նախաձեռնության խմբի կողմից կարող է բողոքարկվել դատական կարգով:

2.5 Երբ է դադարում նախաձեռնող խմբի գրանցումը

Նախաձեռնող խմբի գրանցումը դադարեցվում է՝

- նախաձեռնող խմբի որոշման հիման վրա՝ նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչի դիմումով,
- քաղաքացիական նախաձեռնության կարգով Ազգային ժողովին ներկայացված օրենքի նախագիծը ընդունվելու դեպքում,
- այն դեպքում, եթե Սահմանադրական դատարանի կողմից քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված օրենքի նախագիծը ճանաչվել է Սահմանադրությանը հակասող,
- այն դեպքում, եթե, ԱԺ կողմից նախագիծը մերժելու պարագայում, խումբը Կենտրոնական ընտրական հանձնաժողովին չի իրազեկել օրենքի նախագծի ընդունման նախաձեռնությունը շարունակելու մասին /քվեարկությունից հետո 7-օրյա ժամկետում/,
- այն դեպքում, երբ ուժի մեջ է մտել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ հանրաքվեի արդյունքների ամփոփ-

ման վերաբերյալ որոշումը, որով սահմանվում է, որ հանրաքվեի դրված ակտը չի ընդունվել, իսկ այդ որոշումը բողոքարկելիս Սահմանադրական դատարանը ուժի մեջ է թողել ԿԸՀ-ի կողմից հանրաքվեի արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշումը:

Քաղաքացիական նախաձեռնության լիազոր ներկայացուցիչը օրենքի նախագծի քննարկման ընթացքում իրավունք ունի հանդես գալու որպես օրենսդրական նախաձեռնության հեղինակ կամ հիմնական զեկուցող: Հարցի քննարկման ընթացքում հանձնաժողովի անդամները և Կառավարության ներկայացուցիչը կարող են իրենց ելույթում նախագծի վերաբերյալ առաջարկներ ներկայացնել:

2.6 Ինչ կարգով կարող է նախագիծը դրվել հանրաքվեի

Եթե Ազգային ժողովը մերժում է քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված օրենքի նախագծի ընդունումը, ապա **նախագիծը կարող է** Սահմանադրությամբ և «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով դրվել հանրաքվեի:

Հանրաքվեի անցկացման համար անհրաժեշտ **ստորագրահավաքով** զբաղվում է արդեն իսկ գրանցված նույն նախաձեռնող խումբը, որն Ազգային ժողովին առաջարկել էր օրենքի նախագիծը, եթե

- նախաձեռնող խմբի գրանցումը մինչ այդ չի դադարեցվել,
- Ազգային ժողովի մերժումից հետո 7-օրյա ժամկետում այդ նախաձեռնող խումբը գրավոր ձևով Կենտրոնական ընտրական հանձնաժողովին իրազեկել է օրենքի նախագծի ընդունման

նախաձեռնությունը շարունակելու մտադրության մասին: Ազգային ժողովի կողմից մերժումից հետո՝ 60 օրվա ընթացքում, օրենքի նախագիծը կարող է դրվել հանրաքվեի, եթե.

- **ընտրական իրավունք ունեցող ևս 300000 քաղաքացի միանում է նախաձեռնությանը,**
- **Սահմանադրական դատարանը նախագիծը ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող:**

Քաղաքացիական նախաձեռնության մասնակիցների ստորագրությունների վավերականությունը հաստատում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից քաղաքացիական նախաձեռնության մասնակիցների ստորագրությունների վավերականությունը հաստատվելու դեպքում քաղաքացիական նախաձեռնության լիազոր ներկայացուցիչը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը ստանալուց հետո 15-օրյա ժամկետում դիմում է Սահմանադրական դատարան՝ նախագծի սահմանադրականությունը որոշելու հարցով:

Քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված օրենքի նախագծի վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից՝ Սահմանադրությանը համապատասխանության մասին որոշումն ընդունվելուց, ինչպես նաև՝ Ազգային ժողովի կողմից հանրաքվե անցկացնելու մասին որոշումն ընդունվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, Հանրապետության նախագահը նշանակում է հանրաքվե:

Այստեղ այս ընթացքը չի ավարտվում. անհրաժեշտ է ևս մի նախապայման. **Ազգային ժողովը պետք է հանրաքվե անցկացնելու մասին որոշում ընդունի: Այդ որոշումը կարող է ընդունվել**

ԱԺ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն 3/5-ով:

Հանրաքվեն անցկացվում է Նախագահի՝ հանրաքվե նշանակելուց ոչ շուտ, քան 50, և ոչ ուշ, քան 65 օր հետո:

Հանրաքվեի միջոցով ընդունված օրենքները կարող են փոփոխվել միայն հանրաքվեով: Նման փոփոխություն կարող է կատարվել համապատասխան օրենքի ընդունումից **առնվազն 1 տարի հետո**:

2.7 Ո՞ր օրենքների նախագծերը չեն կարող դրվել հանրաքվեի

Հանրաքվեի չեն կարող դրվել այն օրենքների նախագծերը, որոնք վերաբերում են.

- սահմանադրական օրենքների իրավակարգավորման առարկային,
- պետական բյուջեին,
- հարկերին, տուրքերին, այլ պարտադիր վճարներին,
- համաներմանը,
- պետության պաշտպանությանը և անվտանգությանը,
- միջազգային պայմանագրերին,
- Հանրաքվեի մասին ՀՀ օրենքով սահմանված այլ հարցերի:

Հանրաքվե նշանակելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրի հրապարակումից հետո հանրաքվե անցկացնելու նախաձեռնության հեղինակը համարվում է «ԱՅՈ» քարոզչության կողմ:

«ԱՅՈ» քարոզչության կողմի լիազոր ներկայացուցիչ է համարվում քաղաքացիական նախաձեռնության լիազոր ներկայացուցիչը: «ՈՉ» քարոզչության կողմ կարող են ձևավորել համապատասխանաբար հանրաքվե անցկացնելու մասին Ազգային

ժողովի որոշման նախագծին կամ քաղաքացիական նախաձեռնության կարգով Ազգային ժողով ներկայացված օրենքի նախագծին դեմ կամ ձեռնպահ քվեարկած Ազգային ժողովի պատգամավորները:

Հանրաքվե անցկացնելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրի հրապարակումից հետո յոթնօրյա ժամկետում որպես «ՈՉ» քարոզչության կողմ չգրանցվելու դեպքում, «ՈՉ» քարոզչության կողմ կարող է ձևավորել առնվազն 50 քաղաքացիներից բաղկացած խումբը: «ՈՉ» քարոզչության կողմը ենթակա է գրանցման Կենտրոնական ընտրական հանձնաժողովում: «ՈՉ» քարոզչության կողմը ձեւավորման պահից 3-օրյա ժամկետում գրանցման նպատակով գրություն է ներկայացնում Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Հանրաքվեի դրված ակտն ընդունվում է, եթե դրան կողմ է քվեարկել հանրաքվեի մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան հանրաքվեներին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների 1/4-ը:

Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ հանրաքվե չի անցկացվում:

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Քաղհասարակության
կազմակերպությունների
մասնակցությունը օրենսդրական
նախաձեռնություններին

Տպագրվել է Թայմ թու պրինտ տպարանում
Չափը՝ 60*80 1/16: Ծավալը՝ 1,25 մամուլ:
Թուղթը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 500 օրինակ: